այնքան համակրանքս աւելանում էր եւ այնքան էլ ինձ զարմանք էր պատճառում մեզ հետ եղող միւս եւրոպացիների դէպի նրանց ցոյց տւած վերաբերմունքը: Վերջինները մեծ մասով վաճառականներ էին, ներկայացուցիչներ արեւելքում յայտնի առեւտրական տների:

Ճապոնացիք հաճոյքով էին խօսակցում նրանց հետ եւ իրանց պատրաստականութիւնն էին ցոյց տալիս ամեն կերպ նրանց օգտակար լինելու, մինչդեռ եւրոպացիների վարմունքը աւելի քան տմարդի էր: Ճապոնացիների ներկայութեամբ խօսում էին նրանց հետ, ծիծաղում ու կատակում. իսկ հէնց որ առանձին էին մնում, ծաղրում էին նրանց ու հայհոյում: Դա այն աստիճան ինձ անախորժ էր, որ վերջապէս դիմեցի մի շիկահեր գերմանացու.

—Ինչո՞ւ էք այդպէս վարւում նրանց հետ. մի՞թէ չէք սիրում ճապոնացիներին:

Նա ժպտաց:

—Ինչո՞ւ չեմ սիրում: Օ ոչ. սխալւում էք: Ես շատ եմ սիրում... ճապոնուհիներին: Իսկ ճապոնացո՞ւն, էհ, այնպէս անախորժ է այդ ժողովուրդը: Դուք դեռ նրան չէք ճանաչում: Մի՛ գրաււէք նրանց սիրալիր ժպիտով: Ա՜, այդ ժպիտի տակ ի՜նչեր է թագնւած: Հազար անգամ գերադասում եմ չինացու հետ գործ ունենալ քան ճապոնացու: Առաջինի հետ գոնէ գործը մի կերպ կը կարգադրես, իսկ ճապոնացին հոգիդ բերանդ կը բերէ եւ գործից էլ ոչինչ դուրս չի գայ: Էհ, դուք չը գիտէք. նրա ժպիտը միայն դէմքի վրա է, իսկ սրտումը թշնամութիւն միայն ունի դէպի եւրոպացին:

Այս ասելով շուռ եկաւ ու հեռացաւ:

Գերմանացու պատասխանը մեծ զայրոյթ պատճառեց